


ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՆԵՐԻՄԱՍՏԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՄԻՐԱՆՈՒՇ ԿԵՍՈՅԱՆ * 

Ներիմաստը լեզվաբանության մեջ քննվել է տարբեր տեսանկյուններից, և, ըստ տարբեր չափանիշների, առանձնացվել են ներակա իմաստների տարբեր տեսակներ: Մասնավորապես, ըստ խոսողի կամ հեղինակի նպատակադրման, որոշակի միտումի բացակայության կամ առկայության, առանձնացվում են չկանխամտածված և կանխամտածված ներիմաստներ: Սույն հոդվածում քննվում է կանխամտածված ներիմաստը, մասնավորապես՝ այն, թե ինչ հանգամանքներով և միտումներով կարող է պայմանավորված լինել ներիմաստի միտումնավոր ներառումը խոսքում: Կանխամտածված ներիմաստի հաղորդման դեպքում լեզվական միավորների ընտրությունը հեղինակի/խոսողի կողմից կշռադատված է. նա բավականին ծանրութեթև անելուց հետո, իրադրությունը և իր նպատակին համապատասխան, ընտրում է լեզվական միավորներ՝ իր ասելիքը լավագույնս ներակայորեն հաղորդելու համար: Եվ ամենապարզ, ամենահասարակ միտքն անգամ նա հատուկ միտումով կարող է քողարկել՝ փոխանցելով այն որպես կանխամտածված ներիմաստ: Հայ լեզվաբանության մեջ առհասարակ ներիմաստը քիչ է ուսումնասիրվել, և այս հոդվածը փորձ է որոշ չափով լրացնելու այդ դաշտում եղած բացը:

Բանալի բառեր – ներակա իմաստ, կանխամտածված ներիմաստ, չկանխամտածված ներիմաստ, միտում, էթիկա, քաղաքավարություն, խոսքային անուղղակի ակտեր, ֆոնային գիտելիքներ, մանկր, ներակա վերաբերմունք

Լեզուն մտքերը, գաղափարներն արտահայտելու բազմազան միջոցներ ու հնարավորություններ ունի: Դրանք կարող են արտահայտվել ուղղակիորեն, բացահայտ ձևով, այնպես, ինչպես կան, բայց և անուղղակիորեն, քողարկված ձևով: Եթե ամեն ինչ ասվեր ուղիղ, պարզ ձևով՝ արտակայորեն, խոսքն առհասարակ շատ պարզունակ, աղքատիկ կլիներ, երբեմն՝ ձանձրալի, ձգձգված, մինչդեռ ներակա հաղորդումը հարստացնում է խոսքը, յուրօրինակ նրբերանգներով օժտում այն: Շատ հաճախ հենց ներակա տեղեկատվությունն է կազմում

* Միրանուշ Կեսոյան – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ

Мирянуш Кесоян – аспирантка кафедры армянского языка ЕГУ

Miranush Kesoyan – PhD Student at YSU Chair of the Armenian language.

Էլ. փոստ՝ kesoyan1996@mail.ru. ORCID: <https://orcid.org/0009-0001-9402-4913>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 17.05.2024

Գրախոսվել է՝ 25.06.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024

հաղորդման բուն բովանդակությունը, իսկ արտակայորեն արտահայտվածը հիմք է ծառայում այն վեր հանելու համար, քանզի «խոսքում պարունակվող տեղեկությո՞րը զգալիորեն ավելի հարուստ է նրանից, որը նրանում արտահայտված է ուղղակիորեն: Դեռ ավելին՝ արտակա նշանակությունը ոչ միայն չի սպառում խոսքի ողջ բովանդակային պաշարը, այլև հաճախ չի կազմում նրա ամենակարևոր մասը: Ներակա իմաստները զգալիորեն լրացնում են արտահայտված նշանակությունը և փոխգործակցում են դրա հետ: Խոսքի՝ որպես գործունեության արվեստը ոչ միայն այն է, որ արտահայտի անհրաժեշտ նշանակություններն արտակայորեն, այլև այն, որ հմտորեն առաջացնի ներակա նշանակություններ ու կառավարի ներակա և արտակա իմաստների փոխհարաբերությունը»¹:

Ներիմաստը լեզվաբանության մեջ քննվել է տարբեր տեսանկյուններից, և, ըստ տարբեր չափանիշների, առանձնացվել են ներակա իմաստների տարբեր տեսակներ: Այսպես, ըստ այն բանի՝ ներակա իմաստը կապված է կոնկրետ-համատեքստային իմաստի, թե ասույթի լեզվական բովանդակության հետ, առանձնացվում են երկու տիպի ներիմաստներ՝ **կոնկրետ-համատեքստային** և **ընդհանուրհաղորդակցական**², ըստ հաղորդման միջոցի՝ **լեզվաբանական**, **ոչ բուն լեզվաբանական** և **արտալեզվական**³, ըստ հաղորդվող տեղեկատվության բնույթի՝ **թելադրական** (диктальный) և **եղանակավորող**⁴, ըստ դրսևորման մակարդակի՝ **համակարգային-լեզվական** և **խոսքային**⁵: Իսկ Վ. Բաղդասարյանը, ըստ համատեքստի ընդարձակության և բնույթի, առանձնացնում է **ներիմաստ միկրոհամատեքստի հիման վրա**, այսինքն՝ ասույթի շրջանակներում, **ներիմաստ մակրոհամատեքստի հիման վրա**, այսինքն՝ այնպիսի համատեքստի, որը ներառում է տվյալ ասույթի խոսքային միջավայրը՝ ընդհուպ մինչև խոսքի տվյալ ամբողջական միավորը (ամբողջ նամակը, պատմվածքը և այլն), և **ներիմաստ մետահամատեքստի հիման վրա**, այսինքն՝ այն իրավիճակի, որում իրացվում է խոսքի տվյալ միավորը⁶:

Ներիմաստի տեսակների առանձնացման մեկ այլ չափանիշ է խոսողի կամ

¹ Никитин М. В. Курс лингвистической семантики. Учебное пособие. – 2-е изд., доп. и испр., СПб.: Изд-во РГПУ им. А. И. Герцена, 2007, с. 549.

² Տե՛ս **Комиссаров В. Н.** Современное переводоведение. Учебное пособие, М.: ЭТС, 2002, էջ 61, **Уморова М. В.** Импликация в семантической структуре текста, <https://studylib.ru/doc/286807/implikaciya-v-semanticheskoy-strukture-teksta> (մուտք՝ 15.10.2022), էջ 9:

³ Տե՛ս **Воронушкина О. В.** Виды скрытых смыслов и способы их экспликации // Вестник АлтГПА: гуманитарные науки, 2014, № 21, էջ 65-66:

⁴ Տե՛ս **Лисоченко Л. В.** Высказывания с имплицитной семантикой (логический, языковой и прагматический аспекты): монография, Ростов н/Д: Изд-во Рост. ун-та, 1992, էջ 15, **Иванкова И. В.**, Модальный имплицитный смысл в художественном тексте, Тамбов: «Грамота», 2011, № 9 (52), էջ 131:

⁵ Տե՛ս **Бондарко А.** Эксплицитность/имплицитность в общей системе категоризации семантики // Эксплицитность/имплицитность выражения смыслов, Калининград-Светлогорск, 2006, էջ 24:

⁶ Տե՛ս **Багдасарян В. Х.** Проблема имплицитного, Ер.: Изд-во АН Армянской ССР, 1983, էջ 8-9:

հեղինակի նպատակադրման, որոշակի միտումի բացակայությունը կամ առկայությունը, ըստ որի՝ առանձնացվում են **չկանխամտածված** կամ **ոչ միտումնավոր** և **կանխամտածված** կամ **միտումնավոր** ներքինաստներ⁷: Երբեմն ասույթում առանձին մտքեր, տեղեկություններ կարող են հաղորդվել անուղղակիորեն՝ ներակայորեն՝ անկախ հեղինակի կամքից, այսինքն՝ հեղինակը որևէ նպատակ չի հետապնդում կամ հատուկ միտում չունի իր մտածածը ներակայորեն արտահայտելով, կարելի է ասել՝ ներքինաստը նման դեպքերում ծագում է ինքն իրեն: Սակայն ավելի հաճախ խոսողը կամ հեղինակը ներքինաստ է ներդնում իր խոսքում՝ հետապնդելով որոշակի նպատակ կամ ելնելով որոշակի հանգամանքներից: Քանզի, ինչպես նշում է ռուս լեզվաբան Մ. Վ. Նիկիտինը, «կարող են լինել բազմաթիվ պատճառներ, որոնց դեպքում մտքի, կամքի, ցանկության առաջնային, ուղղակի արտակա արտահայտությունը դիտվում է անցանկալի կամ անարդյունավետ», և խոսողը կարող է ավելի լավ իրագործել իր նպատակը, եթե դիմի անուղղակի հաղորդակցական գործողության՝ իմաստային ծանրաբեռնվածություն մտցնելով ասույթում այնպես, որ լսողն ինքը դատի այդ մասին⁸:

Կանխամտածված ներքինաստի հաղորդման համար հեղինակը/խոսողն իր մտադրությունը կյանքի կոչելու, ցանկալի արդյունքի հասնելու նպատակադրմամբ, կարծես առաջնորդվելով «յոթ չափի՛ր, մեկ կտրի՛ր» սկզբունքով, ընտրում է կոնկրետ լեզվական միջոցներ, հաշվի առնում դրանց կիրառական առանձնահատկությունները, համատեքստում դրանց իրացման հնարավորությունները: Այդ լեզվական միջոցները, ռուս լեզվաբան Վ. Ն. Կոմիսարովի պատկերավոր մեկնաբանմամբ, ծառայում են որպես յուրատեսակ «մտքի աղյուսիկներ» և յուրաքանչյուր ասույթում ընտրվում և իրացվում են այնպես, որ հաղորդակիցները, որոնք ունեն անհրաժեշտ լեզվական և ֆոնային գիտելիքներ, կարողանան դուրս բերել ասույթից հաղորդվող տեղեկությունը, որը «չի հանգում «մտքի աղյուսիկների» պարզ գունարին, որոնցից կազմված է ասույթը»,

⁷ St' u **Никитин М. В.**, նշվ. աշխ., էջ 533, **Безуглая Л. Р.** Терминосистема имплицитности в лингвистике // Вісник Харківського національного університету імені В. Н. Каразіна. Серія: Іноземна філологія. Методика викладання іноземних мов, 2016, Вип. 83, էջ 10, <http://surl.li/seowz> (մուտք՝ 01.11.2023): Ներակալի խնդրին անդրադարձած հայ լեզվաբան Վ. Խ. Բաղդասարյանը նախ և առաջ տարբերակում է հեղինակի կողմից **գիտակցված** և **չգիտակցված** ներքինաստներ, ապա առաջին խմբում առանձնացնում է հեղինակի կողմից **կանխամտածված** և **չկանխամտածված** ներքինաստները (տե՛ս **Багдасарян В. X.**, նշվ. աշխ., էջ 9): Իսկ ռուս լեզվաբան Օ. Վ. Վորոնուշկինան, բացի լայն տարածում ունեցող այս երկու տեսակներից, առանձնացնում է նաև երրորդ՝ միջանկյալ տեսակ՝ **ունիվերսալ թաքնված մտքեր**: Սա այն դեպքում է, երբ մտադրությունն աստիճանաբար ձեռք է բերում կիրառական ունիվերսալություն, ինչի օրինակ կարող են ծառայել հանրածանոթ փոխաբերությունները, խորհրդանիշները և այլաբանությունները, որոնցում առկա է թաքնված և բառացի իմաստների «ունիվերսալ» հարաբերակցություն (տե՛ս **Воронушкина О. В.** Концептуальная база системного описания скрытых смыслов // Филология и человек, Барнаул: Изд. Алтайского университета, 2016, № 1, էջ 14):

⁸ **Никитин М. В.**, նշվ. աշխ., էջ 531:

քանի որ «լեզվական միավորների կապակցությունն ասույթում ստեղծում է նոր տեղեկություն, որը բացակայում էր օգտագործված «մտքի աղյուսիկներում»⁹: Եթե խոսքը մասնավորեցնենք բառերի առումով, կարող ենք ասել, որ հատուկ միտումով կիրառված յուրաքանչյուր բառ խոսքում ստանում է նոր կյանք, ձեռք բերում լրացուցիչ իմաստային ծանրաբեռնվածություն, դառնում անհրաժեշտ «ավագե գանգվածը» այն շաղախի, որով հեղինակը կերտում է իր «կառույցը»՝ հատուկ ներդրված նշանակությամբ: Այս առումով միանգամայն դիպուկ է հետևյալ բնորոշումը. «Նախադասությունը չի ձևավորվում որպես բառերի պարզ գումար՝ իրենց նշանակություններով, այլ ավելի շուտ՝ հակառակը. բառերն իրենց նշանակություններով իրական գոյություն են ձեռք բերում միայն որպես համատեքստի մաս ասույթի շրջանակներում»¹⁰:

Փաստորեն, լեզվական միջոցների ընտրությունն իսկ վկայում է խոսողի կամ հեղինակի որոշակի միտումի առկայության մասին: Այսինքն՝ կարելի է ասել, որ կանխամտածված ներիմաստն ունի իր, այսպես ասած, «ցուցիչները»: Բերենք մեկ-երկու օրինակ: Որպես այդպիսի «ցուցիչներ» կարող են ծառայել **իրար տրամաբանորեն հակասող արտահայտությունները**, օրինակ. **«Շարք օրը՝ փակ դռների ետևում, առանց լրատվամիջոցների ներկայության, իրեն ժողովրդավար հռչակած իշխող կուսակցությունը** հերթական համագումարն արեց նաև կուսակցական ղեկավար մարմնի վարչության ընտրություններ անցկացնելով» («Հրապարակ», Եր., 2022, № 185 (3412), էջ 3). այստեղ հեղինակը միտումնավոր ներակա տեղեկույթ է ներդրել իր ասույթում, որի մասին վկայում է ընդգծված հատվածների միջև եղած հակասությունը: Այդ տեղեկույթը վեր հանելու համար պետք է կատարել որոշակի ենթադրություն, այն է՝ «եթե իշխող կուսակցությունը ժողովրդավար է, ապա ինչո՞ւ է «փակ դռների ետևում, առանց լրատվամիջոցների ներկայության» անցկացնում համագումարը. չէ՞ որ ժողովրդավարությունը ենթադրում է, որ այն պետք է լիներ բացահայտ»: Այդպիսով հեղինակը ներակայորեն արտահայտում է նաև իր բացասական գնահատականը տվյալ իրողության վերաբերյալ:

Կամ նշենք թևավոր դարձած խոսքերը, օրինակ. «Ընդհանրապես, ադրբեջանական կողմում հնչած կարծիքների մասով պետք է նկատել, որ հիմնականում խոսում են ոչ միայն տեղի փորձագետները, այլ նաև Ռուսաստանի ադրբեջանական լոբբիստական կառույցների կողմից սնվող ռուս փորձագետները՝ ներկայացնելով հիմնականում ադրբեջանական կողմի համար ականջահաճո տեսակետներ, ինչը բնական է, եթե հիշենք, որ **«ով վճարում է, նա էլ պատվիրում է երաժշտությունը»** («Հրապարակ», Եր., 2022, № 187 (3414), էջ 4). ընդգծվածն անուղղակիորեն այն միտքն է արտահայտում, որ «ռուս փորձագետներին հենց ադրբեջանական կողմն է վճարում, ուստի նա էլ թելադրում է նրանց ասելիքը»:

⁹ Комиссаров В. Н. Современное переводоведение. Учебное пособие, М., ЭТС, 2002, с. 55-56.

¹⁰ Колшанский Г. В. Проблемы коммуникативной лингвистики // Вопросы языкознания, 1979, № 6, с. 52.

Իհարկե, խոսողը կամ հեղինակը կարող է իր միտքն արտահայտել պարզ, բացահայտ ձևով, առանց այլնայությունների, բայց ոչ, նա միտումնավոր դիմում է այլընտրանքային արտահայտման՝ անուղղակիության, ինչի միջոցով մեծացնում է ասույթի իմաստային ընդգրկման ծավալը, ընդգծում իր միտքը, արտահայտիչ դարձնում այն, լսողին կամ ընթերցողին ստիպում լարել միտքը, ջանքեր գործադրել, վերլուծություններ անել այն հասկանալու համար և այլն: Առհասարակ հեղինակը/խոսողն ասույթում տեղեկույթը կանխամտածված ներակայում է՝ ելնելով տարբեր հանգամանքներից, մասնավորապես՝

1. **Էթիկայի նորմերը պահպանելու համար:** Քաղաքավարությունից ելնելով, կոպիտ չլինելու, դիմացինին չվիրավորելու, նրան անհարմար վիճակի մեջ չդնելու համար հաճախ խոսողը դիմում է իր ասելիքն անուղղակիորեն արտահայտելու տարբերակին: Ինչպես նշում է անգլիացի լեզվաբան Ջ. Լիչը, համագործակցության սկզբունքի հետ գործում է նաև **քաղաքավարության սկզբունքը**, որը շատ հաճախ ավելի բարձ է գնահատվում, քան համագործակցության սկզբունքը, և որոշակի դեպքերում փրկում է վերջինիս լուրջ փորձանքից: Քաղաքավարության սկզբունքն ունի ավելի մեծ կարգավորիչ դեր, քան համագործակցության սկզբունքը, քանզի նրա նպատակն է պահպանել սոցիալական հավասարակշռությունը և ընկերական հարաբերությունները, ինչը հնարավորություն է տալիս մեզ ենթադրելու, որ մեր գրուցակիցները համագործակցում են¹¹: Ջ. Լիչն առանձնացնում է քաղաքավարության սկզբունքի հետևյալ վարքականոնները.

- ✓ **տակտի վարքականոն.** նվազագույնի հասցնել վնասը գրուցակցի կամ 3-րդ անձի համար (առավելագույնի հասցնել օգուտը գրուցակցի կամ 3-րդ անձի համար),
- ✓ **մեծահոգության վարքականոն.** նվազագույնի հասցնել օգուտը իր համար (առավելագույնի հասցնել վնասը իր համար),
- ✓ **հավանության վարքականոն.** նվազագույնի հասցնել գրուցակցին կամ 3-րդ անձին ուղղված նախատինքը (առավելագույնի հասցնել գրուցակցին կամ 3-րդ անձին ուղղված գովասանքը),
- ✓ **համեստության վարքականոն.** նվազագույնի հասցնել սեփական անձի գովքը (առավելագույնի հասցնել սեփական անձին ուղղված նախատինքը),
- ✓ **համաձայնության վարքականոն.** նվազագույնի հասցնել անհամաձայնությունը իր և գրուցակցի միջև (առավելագույնի հասցնել համաձայնությունը իր և գրուցակցի միջև),
- ✓ **համակրության վարքականոն.** նվազագույնի հասցնել հակակրանքը իր և գրուցակցի միջև (առավելագույնի հասցնել համակրանքը իր և գրուցակցի միջև)¹²:

¹¹ Տե՛ս G. N. Leech, Principles of Pragmatics, London and New York: Longman, 1983, էջ 81-83:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 132:

Քաղաքավարության այս կանոններով առաջնորդվելով՝ խոսողը հաճախ դիմում է իր ասելիքի անուղղակի ձևակերպմանը: Պատահական չէ, որ, ըստ արտահայտման եղանակի, լեզվաբանության մեջ տարբերակվում է քաղաքավարության երկու տեսակ՝ արտակա և ներակա: Արտակա քաղաքավարությունը այս կամ այն հանրության շրջանում ընդունված նորմալ, տեղին, բառացի կամ ոչ բառացի դրսևորված վարքագիծն է և բնութագրվում է գործող նորմերի պահպանմամբ: Իսկ ներակա քաղաքավարությունը ենթադրում է գիտակցաբար կիրառված մարտավարություններ, որոնք խոսողին հնարավորություն են տալիս խուսափելու հաղորդակցի հեղինակությունը վնաս հասցնելուց, պահպանելու նրա հեղինակությունը և միաժամանակ նպաստում են խոսողի «ինքնաներկայացմանը» որպես հանրության զգուշավոր և նրբանկատ անդամի¹³: Երկրորդ դեպքում խոսողը, կախված իրադրությունից, օգտագործում է լեզվական տարբեր միջոցներ՝ անուղղակիորեն հաղորդելու իր միտքը՝ պատշաճ մակարդակում պահելով հաղորդակցությունը: Այդ միջոցների միավորող հատկանիշը հենց արտահայտման անուղղակիությունն է:

Կանխամտածված ձևով կարող է արտահայտվել մերժումը: Այսպես՝ որպեսզի մերժումը կտրուկ չհնչի, կամ մերժման տպավորությունը մեղմելու համար կարող է ուղղակի բացասական պատասխանի փոխարեն նշվել մերժման պատճառը, օրինակ.

- Վաղը կգա՞ս մեր տուն:
- **Աշխատանքի եմ:**

Բերված օրինակում «Աշխատանքի եմ» ասույթը ներակայում է հաղորդակցության մասնակցի բացասական պատասխանը՝ ինքնին նշելով հրավերի մերժման պատճառը. «Չեմ կարող գալ, քանի որ աշխատանքի եմ»:

Երբեմն էլ հաղորդակցության մասնակիցը ուղղակի մերժման փոխարեն կարող է նշել տվյալ գործողության վատ հետևանքը կամ հետևանքները՝ այդպիսով նպատակ հետապնդելով հասկացնելու դիմացինին իր մերժումը: Այսպես, օրինակ.

- Գնա՞նք զբոսնելու:
- **Պարապմունքից կուշանանք:**

Խոսակիցը մերժում է առաջարկը՝ նշելով հետևանքը, այն է՝ զբոսանքի գնալու հետևանքով պարապմունքից կուշանան:

Կանխամտածված ներակայորեն կարող է արտահայտվել նկատողությունը կամ դիտողությունը՝ տվյալ անձին վատ վիճակի մեջ չդնելու, հնարավոր ծանր ազդեցությունը մեղմելու համար: Այսպես, օրինակ, երբ կարդում ենք ինչ-որ հարցի կամ թեմայի շուրջ մեկի գրած աշխատանքը, որում ինչ-ինչ մտքեր սխալ են ձևակերպված, փոխանակ ուղիղ ասելու՝ «Այս միտքը սխալ է / սխալ ես ներկայացրել», կարելի է դա ներակայելով ասել. «Ինչո՞ւ այս միտքը փոքր-

¹³ St' u **Ерзинкян Е. Л.** Лингвистическая категория вежливости: семантика и прагматика, Ер.: Изд. ЕГУ, 2018, էջ 128-130:

ինչ այլ կերպ չձևակերպել»: Նման դեպքերում օգնության է գալիս մեղմասությունը, որը կոպիտ խոսքի փոխարինումն է մեղմ տարբերակով:

Բերված օրինակները ներկայացնում են խոսքային անուղղակի ակտեր, որոնց «կատարողական մտադրությունը չի համապատասխանում արտաբերվող ասույթի լեզվական ձևավորմանը, բայց շփման իրադրության համագործակցային սկզբունքների կիրառմամբ ընկալվում է լսողի կողմից»¹⁴: Դրանք ներակայորեն արտահայտում են այնպիսի միտք, որը համակարգայնորեն համապատասխանում է մեկ այլ ասույթի, վերջինիս բուն նշանակությունն է:

2. Հասարակական դիրքով, հարաբերություններով պայմանավորված՝ հաղորդակցությունը պատշաճ մակարդակում պահելու համար: Մարդկանց միջև հարաբերություններն ընդհանուր առմամբ որոշում են նաև ասելիքի արտահայտման եղանակը, միջոցը: Այսպես՝ նույն միտքը մենք շատ հաճախ չենք կարող արտահայտել նույն ձևով, երբ խոսում ենք վերադասի կամ առհասարակ դիրքով ավելի բարձր անձի հետ և երբ խոսում ենք, օրինակ, ընտանիքի անդամների կամ ընկերոջ հետ: Օրինակ.

– **Եթե շահն հաճի լսել**, ես կբացատրեմ պատճառը,– խոսեց Շահռուխը, որ կանգնած էր իշխանների մոտ¹⁵ (ՄԵ, էջ 195):

Իշխանական հիերարխիան թույլ չէր տալիս, որ Շահռուխ բեկն ուղղակիորեն հարց հղեր շահին՝ հարցնելով նրա ցանկությունը (օրինակ. «Ուզո՞ւմ եք լսել»): Այդ պատճառով նա իր միտքը՝ հարցը, որը տվյալ դեպքում հաղորդվում է ներակայորեն, ձևակերպում է պատմողական նախադասությամբ, բայց հասկանալի է, որ նա այդպես իրականում շահի թույլտվությունն էր հայցում:

3. Ասելիքը քողարկելու ձգտումով: Կյանքում շատ են դեպքերը, երբ մենք պարզապես չենք կարող բացահայտ ասել այն, ինչ մտածում ենք: Հաճախ անհրաժեշտ է լինում, որ ասելիքը հասկանալի լինի կոնկրետ թիրախային անձին կամ անձերին միայն, իսկ մյուսներն անհաղորդ մնան ասվածին: Այդ իսկ պատճառով բուն ասելիքը կողավորվում է: Ճիշտ է, տվյալ դեպքում հարց է, թե որքանով կողավորված հաղորդումը կրնկալի նա (նրանք), ում (որոնց) հասցեագրված է: Օրինակ.

– Բարի է, Նար իշխան,– և ավագ Համունին, հեծնելով նժույզը, կռացավ և նորից խոսեց կիսաձայն.– սակայն ինձ և ամենքիս մտահոգում է Անգեղաց իշխանիկը: Գնա հանկարծ և...

– **Եղիբ անհոգ: Նա կդառնա անվտանգ.**– Կամսարականը հանգստացնող մի շարժում արավ, որից Համունին թեև չհասկացավ ոչինչ, բայց գլխով արավ¹⁶ (ՍՁ, էջ 40):

¹⁴ Ռ. Դոխայան, Խոսքային անուղղակի ակտերը արդի հայերենի խոսքային գործունեության իմաստային ենթադաշտում // Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Եր.: «Լինգվա», 2022, № 1 (60), էջ 91:

¹⁵ Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 5, Եր.: Հայպետհրատ, 1963:

¹⁶ Ստ. Զորյան, Հայոց բերդը, Եր.: Հայպետհրատ, 1959:

Կամսարական իշխանը չէր կարող այլոց ներկայությամբ բացահայտ ասել Նար իշխանին իր ձեռնարկած քայլի մասին, որ իր թիկնապահներին ուղարկել է սպանելու Անգեղաց իշխանիկին, որպեսզի նա այլևս վտանգ չներկայացնի իրենց համար, քանզի նա հակառակ թևում էր: Այսինքն՝ Կամսարական իշխանը հատուկ դիտավորությամբ ուղղակիորեն նշում է այն պատճառ-գործողության հետևանքը, որը ներակայվում է, որպեսզի մյուսները չհասկանան. «Անգեղաց իշխանիկին կսպանեն, ուստի նա կդառնա անվտանգ»:

4. Խոսողի համար բուն միտքն ուղղակիորեն արտահայտելու անհնարինությունը: Նախորդիվ նշեցինք, որ հաճախ հանգամանքները թույլ չեն տալիս ուղղակիորեն արտահայտել մեր միտքը, բայց և կան դեպքեր, երբ դա պարզապես անհնար է. «Ներակայորեն մենք կարող ենք արտահայտել ոչ միայն այն, ինչի մասին չենք ուզում խոսել ուղիղ ձևով, այլև այն, որ և ավելի կարևոր է, ինչն առհասարակ չի կարող ամբողջապես և հստակ արտահայտվել արտակայորեն»¹⁷:

Որպես օրինակ բերենք մի հատված Արշակավանում ապաստանած շինական Թորգոմի և Գնունի իշխանի գրույցից.

– Եվ ի՞նչը կուզեիր իմանալ...

– Մի շինական, որ իշխան է սպանել, կարո՞ղ է գալ այստեղ... քաղաք, և դուրա համար չե՞ն պատժի նորան կամ... չեն վերադարձնի տիրոջը (ՄՁ, էջ 86):

Թորգոմը չէր կարող ասել, որ իշխանի է սպանել՝ Դավիթ Համունուն, բայց ուզում էր իմանալ, թե ինչ պատիժ կսահմանվեր իր համար, եթե պարզվեր դա: Ուստի նա, փոխանակ ասելու, որ ինքն է սպանություն գործել, քանի որ դա նա իր համար անկարելի էր համարում, իր հարցը ձևակերպում է ընդհանրական իմաստով, թեև կարելի է հասկանալ, որ մասնավորեցված իմաստ է քողարկվում, և հարցի սուբյեկտը՝ այդ շինականը, որն ուղղակիորեն չի անվանվում, հենց ինքն է:

5. Ուշադրություն գրավելու համար: Լսարանի ուշադրությունն իր խոսքի վրա հրավիրելու, այդպիսով նրա միտքը լարելու համար հեղինակը/խոսողը որոշակի տեղեկույթ թողնում է տողատակում, որպեսզի ընթերցողը/լսողն ինքը մի պահ կանգ առնի, անդրադառնա ասվածին, վերլուծի և վեր հանի հեղինակի «չասածը»: Օրինակ. «Իսկ «Հայաստան» դաշինքը, ավաղ, կարծես թե խանդավառ վազում է երրորդ արտահերթ ընտրությանը նույն հին ձևերով, նույն փոցխը երրորդ անգամ տրորելու» («Իրավունք», Եր., 2023, № 129 (3740), էջ 4). իր ասելիքի մի մասը հեղինակը ձևակերպել է այլ կերպ, որն այք է ծակում և ստիպում ընթերցողին որոշակի վերլուծություն անել՝ վեր հանելու դրա տակ թաքնված իրական իմաստը: Նախ վերլուծվում է, թե ինչ է ենթադրում փոցխը տրորելը. երբ մարդը տրորում է փոցխը, այսինքն՝ կանգնում է փոցխի գլխին, պոչը հետ է դառնում՝ հարվածելով նրա դեմքին: Այնուհետև ընթերցողը

¹⁷ Хоанг Фэ, Семантика высказывания // Новое в зарубежной лингвистике, Выпуск 16. Лингвистическая прагматика, М.: «Прогресс», 1985, с. 399.

ջանում է հասկանալ, թե հեղինակն ինչ իմաստ է ներդրել դրա մեջ, ինչ է ցանկացել ասել. տվյալ դեպքում հեղինակն ընդգծված պատկերավոր արտահայտությամբ ներակայում է այն, որ «դաշինքը, անցած երկու փորձից դասեր չքաղելով, երրորդ անգամ գնում է նույն քայլին՝ գործողությանը, որի հարվածը նորից անդրադառնալու է հենց իր վրա»:

6. **Մթնոլորտը շիկացնելու, դիմացինին է՛լ ավելի գրգռելու միտումով:** Այս խմբում կարելի է ներկայացնել այն դեպքերը, երբ հարցմանն ուղղակի պատասխանելու փոխարեն տրվում է լրացուցիչ տեղեկություն, ինչի նպատակն է է՛լ ավելի մեծացնել լարումը: Հիշենք Արշակ արքայի և Տիրիթի գրույցը Գնելի մասին: Տիրիթը նպատակ ուներ Արշակ արքային տրամադրելու Գնելի դեմ, որպեսզի վերջինիս ձեռամբ վերացնեն Գնելին իր ճանապարհից, այդ պատճառով նա Արշակ արքայի հարցերին ուղղակի պատասխան տալու փոխարեն այլ տեղեկություն էր զուգահեռաբար հաղորդում: Այսպես՝ Արշակը հարցնում է, թե ինչով են զբաղվում Գնելն ու նրան այցելած նախարարների որդիները.

– Եվ զբաղվում են զինախաղով:

– Երբեմն և որսագնացությամբ, արքա, – ասաց Տիրիթը և լռեց՝ խուսափուկ հայացքը նորից հաճելով գահասրահում (ՄՁ, էջ 110):

Տիրիթը պարզապես պատասխանելու, որ հենց զինախաղով են զբաղվում, հավելում է անում՝ ներակայելով հարցի դրական պատասխանը՝ այդպիսով ցանկանալով ավելի գրգռել Արշակին և է՛լ ավելի տրամադրել Գնելի դեմ:

7. **Խոսքն ավելի ազդեցիկ, արտահայտիչ ու պատկերավոր դարձնելու համար:** Խոսողը/հեղինակը շատ հաճախ միտում ունի ոչ միայն հաղորդելու ինչ-որ բան անուղակիորեն, այլև դա այնպես հաղորդելու, որ իր խոսքն ավելի ազդեցիկ լինի, և ներազդման ուժը՝ ավելի մեծ: Օրինակ. «... Բաքուն հսկայական լոբբիստական աշխատանք էր կատարել՝ ջանալով հասնել նրան, որ իր դաշնակից Իսրայելի ԱԲ-ն Հայաստանը ճանաչի հակասեմական երկիր: Գործը գրեթե 100 տոկոս հաջողած էր, սակայն ըստ Տելեգրամ ալիքներում առկա տեղեկատվության, «անհայտ» երկրի իրավասու կառույցից Թեյ-Ավիլ փոխանցվել է տեղեկատվություն հրկիզման իրական կազմակերպիչների և կատարողների մասին: **Այս անգամ սև խավիարը չօգնեց...**» («Իրավունք», № 129 (3740), էջ 1): Թաքնված ներիմաստն ընկալելու համար օգնության են գալիս ֆոնային գիտելիքները: Պետք է նախ իմանալ, թե ինչ է խավիարային դիվանագիտությունը, որը վերագրվում է Ադրբեջանին: Դա Ադրբեջանի լոբբիստական ռազմավարություն է, ըստ որի՝ երկիր հրավիրված օտարերկրյա պատվիրակները որպես նվեր ստանում են սև խավիար, դրա հետ՝ նաև այլ թանկարժեք «նվերներ»՝ ոսկի, գումար և այլն, որոնց հետևում կոնկրետ նպատակ է թաքնված: Տվյալ օրինակում «սև խավիար» ասելով հեղինակը զուտ խավիարը նկատի չունի, այլ դրանով ներակայում է հենց այն «նվերները», նյութական միջոցները, որոնք Բաքուն ներդրել էր իր ուզածին հասնելու համար, որոնք, սակայն, չճառայեցին իրենց նպատակին, այսինքն՝ ընդգծվածը ներակայում է «*Բաքվի*

դիվանագիտությունն այս անգամ ձախողվեց» իմաստը:

Առհասարակ խոսքը տպավորիչ ու արտահայտիչ դարձնելուն ծառայում են արտահայտչական-պատկերավորման միջոցները, որոնք շատ դեպքերում հանդես են գալիս որպես ներիմաստի կրողներ՝ միաժամանակ կատարելով երկու գործառույթ՝ խոսքի պատկերավորման և ներիմաստի հաղորդման¹⁸:

8. **Հաղորդվածի նկատմամբ սեփական վերաբերմունքն արտահայտելու և այն գնահատելու համար:** Հեղինակը կամ խոսողը երբեմն իր խոսքը կառուցում է այնպես, միտումնավոր ընտրում է այնպիսի միջոցներ, որ, բացի որոշակի տեղեկությոցից, անուղղակիորեն ներակայորեն արտահայտի իր վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ, օրինակ. ««Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ-ի և «Բալասանյան դաշինք»-ի **«ապահարգանի»** գործընթացից» (<https://armilur.am/1324916/>): Խոսքը ՔՊ-ի և «Բալասանյան դաշինք»-ի միջև համագործակցության խզման մասին է, իսկ **ապահարգան**-ը ամուսնության օրինական լուծարումն է, որը հողվածագիրը, տվյալ դեպքում կիրառելով այլ իմաստով, ներակայորեն արտահայտում իր քամահրական վերաբերմունքը նշյալ երևույթի նկատմամբ¹⁹:

9. **Բուն հարցին պատասխանելուց խուսափելու՝ մանևրելու միտումով:** Երբեմն, տարբեր հանգամանքներով պայմանավորված, օրինակ՝ հասարակական հարաբերությունների թելադրանքով, բախումից խուսափելու համար և այլն, խոսակիցն ընտրում է հարցին անուղղակիորեն պատասխանելու տարբերակը՝ ներակայելով բուն պատասխանը, որի վերականգնումը առանձին դեպքերում կարող է միանշանակ չլինել: Օրինակ.

– Հավանական չէ ս գտնում այս բացատրությունը,– հարցրեց Շահր Ամիրգյունեին:

– Եթե իմ արեզակնափայլ տերը հավանական է գտնում...

– Բոլորովին հավանական, ընդհատեց շահր գայրագին... (Մ^Ե, էջ 195):

Պատասխանողը Ամիրգյունեն, զգուշանալով²⁰, որ իր պատասխանը կարող է հակասել շահի համոզմանը, ինչը նրա համար ցանկալի չէր, ուղղակի պատասխանելու, որ հավանական է համարում կամ ոչ, այնպես է ձևակերպում իր

¹⁸ Խոսքի արտահայտչական-պատկերավորման միջոցների այս գործառույթին անդրադարձել ենք առանձին քննությամբ (տե՛ս Մ. Կետյան, Պատկերավորման-արտահայտչական միջոցները որպես ներիմաստի արտահայտման ոճական հնարանքներ: Քննություն նոր լրսյսի ներքո // ՎԼԸ, Եր., 2022, № 4, էջ 173-190):

¹⁹ Մասնավորապես հայերենում խոսողի կամ հեղինակի բացասական-հեզմական վերաբերմունքի ներակա արտահայտման առնչությամբ տե՛ս մեր «Խոսողի/հեղինակի բացասական-հեզմական վերաբերմունքի ներակա արտահայտումը արդի հայերենում» հոդվածը («Գիտական Արցախ», Եր., 2023, № 3, էջ 109-120):

²⁰ Զգուշավորության և ներիմաստի միտումնավոր արտահայտման մի քանի այլ պատճառների մասին տե՛ս Ն. Սանուկյան, Ե. Երզնկյան, Կանխամտածված ներիմաստի արտահայտումը զեղչված և անավարտ նախադասություններում // Օտար լեզուները Հայաստանում, Եր., 2013, № 1 (22), էջ 19-32:

կարծիքը, որ բոլոր դեպքերում համընկնի շահի կարծիքին՝ այդպիսով ներակայելով պատասխանի հնարավոր տարբերակները, որոնք կարող են մեկնաբանվել, օրինակ, այնպես, որ եթե արեգակնափայլ տերը հավանական է համարում, ապա այո՝ դա միանգամայն ճիշտ է, և ինքը ևս հավանական է համարում, իսկ եթե արեգակնափայլ տերը հավանական չի համարում, ինքը՝ նույնպես: Ընդ որում նրա մտադրությունը շահը հասկանում է՝ ընդհատելով նրա խոսքը:

Առհասարակ խոսքային մանրը հնարավորություն է տալիս խուսափելու հաղորդակցական ռիսկերից, հաղորդակցության անհաջող կամ անցանկալի ելքից, և ներակայումը, որը նպատակ ունի քողարկելու բացասական ենթատեքստը և թույլ չտալու խոսակցի հուզական բացասական ռեակցիան, դիտվում է որպես խոսքային մանրի միջոցներից մեկը²¹: Մանրելու, հարցին ուղղակիորեն պատասխանելուց խուսափելու միջոց է հարցին հարցով պատասխանելը, որով միաժամանակ գրուցակիցը ներակայորեն հասկացնում է սրված հարցի անտեղին լինելը: Օրինակ.

– Դուք ծածուկ քարոզարշա՞վ եք արել, որ գիտեք, թե երևանցիներն ինչ են ուզում:

– Իսկ Դուք քանի՞ հոգու հետ եք ինտերվյու արել, որ ինձնից շատ գիտեք երևանցու ուզածը, թող անհամեստություն չհնչի («Հրապարակ», Եր., 2023, № 93 (3548), էջ 2):

Լրագրողի հարցին, որում ներակայորեն դրսևորվում է նաև նրա հեզնական վերաբերմունքը, գրուցակիցը, որն ընկալում է հարցում թաքնված ներմաստը, մասնավորապես՝ լրագրողի հեզնանքը, պատասխանում է ոչ թե ուղղակիորեն, այլ հարցով, որում ինքը ևս ներակայորեն արտահայտում է իր հեզնանքը և այն, որ հարցը անպատշաճ է:

Երբեմն էլ գրուցակիցը հարցի բուն պատասխանից խուսափելու համար հիմնվում է հենց սրված հարցի վրա՝ օգտագործելով դրանում արտահայտված որոշ կետեր: Օրինակ.

– Պարոն Խաչատրյան, լա՞վ եղավ, որ Արթուր Դավթյանը դուրս եկավ հավակարգից, **նրա հետ կոնֆլիկտ ունեիք**:

– Ես որևէ մեկի հետ կոնֆլիկտ չունեմ («Հրապարակ», № 187 (3414), էջ 2):

Լրագրողի հարցը ձևակերպված է այնպես, որ դրա համար հիմք է ծառայում **«նրա հետ կոնֆլիկտ ունեիք»** իրողությունը, այսինքն՝ ըստ դրա պետք է ասել՝ լա՞վ եղավ նշվածը, թե՞ ոչ: Քաղաքական գործիչը հիմնվում է այդ իրողության վրա և ոչ թե տալիս է կոնկրետ պատասխան, այլ ժխտում է հարցման հիմքը՝ այդպիսով ներակայորեն հասկացնելով լրագրողին, որ հարցն անտեղի է, գուրկ հիմքից:

²¹ Sté u O. C. Иссере, А. В. Журова, Имплицитность как способ речевого маневрирования в публичной коммуникации // Вестник Омского государственного педагогического университета. Гуманитарные исследования, 2022, № 1 (34), էջ 83:

10. **Ընդգծելու համոզման ուժը:** Երբեմն խոսողն իր համոզումն ընդգծելու համար այն ներկայացնում է մեկ այլ կաղապարով, քանի որ շատ հաճախ ուղղակիորեն ասված միտքը հասարակ ու պարզ է լինում, մինչդեռ այլակերպ ձևակերպումն այն կարող է ավելի գորեղ ու ազդեցիկ դարձնել: Օրինակ. «Առուշան Հակոբյանը հայտարարեց. «Բայց Արծվաշեն հայկական շուն էլ ուղարկես չի գնա: Արծվաշենի փոխանակումը կործանում է»» («Առավոտ», Եր., 2023, № 221 (6993), էջ 2): Հայտնի է, որ Արծվաշենը Ադրբեջանի կազմում Հայաստանի անկլավ է, որտեղ իշխող պայմանների պատճառով հայերի բնակության մասին խոսք լինել չի կարող, այսինքն՝ ընդգծվածը ներակայում է այն միտքը, որ այնքան վատ են պայմանները, որ հայը չի գնա այնտեղ ապրելու: Ներակայելով դա և արտահայտելով ավելի կոշտ ձևակերպմամբ՝ խոսողն ավելի է ընդգծում այդ համոզումը: Այսինքն՝ ամենապարզ, ամենահասարակ միտքն անգամ, հաղորդվելով անուղղակի ձևակերպմամբ, այսինքն՝ ներակայվելով, հաճախ կարող է շատ ավելի համոզիչ դառնալ:

Այսպիսով՝ միշտ չէ, որ ամեն ինչ ասվում է ուղղակիորեն: Շատ հաճախ խոսքում պարունակվող տեղեկույթը շատ ավելի լայն է, քան արտահայտված է տվյալ կառույցում, ավելին՝ հենց այդ արտակայորեն չարտահայտվածը՝ ներիմաստն է կազմում խոսքի բուն բովանդակությունը: Այն հարստացնում է խոսքի ընդգրկումը: Ընդ որում խոսողը կամ հեղինակը շատ հաճախ ինքն է կանխամտածված ներիմաստ ներդնում իր խոսքում՝ ելնելով տարբեր հանգամանքներից և հետապնդելով տարբեր նպատակներ, այսինքն՝ ընտրում է հատուկ միջոցներ, խոսքը կառուցում այնպես, որ բուն ասելիքը սևով սպիտակի վրա գրված չլինի, այլ ընկալվի որպես տողատակ:

МИРАНУШ КЕСОЯН – Выражение преднамеренного имплицитного смысла в современном армянском языке. – Имплицитный смысл рассматривался в лингвистике с разных точек зрения, и в соответствии с разными критериями были выделены разные типы имплицитного смысла. В частности, в зависимости от отсутствия или наличия намерения, определенной тенденции говорящего или автора, различаются непреднамеренные и преднамеренные смыслы. В данной статье рассматривается преднамеренный смысл, в частности, то, какими обстоятельствами и тенденциями может быть вызвано намеренное внедрение имплицитного смысла в речь. В случае передачи преднамеренного смысла автор/говорящий осознанно выбирает языковые единицы: обдумав и проанализировав ситуацию, он, в соответствии с ситуацией и своей целью, выбирает необходимые языковые единицы для того, чтобы лучше имплицитно передать смысл своей речи. И даже самую простую, самую ясную мысль он может замаскировать, передав её как преднамеренный смысл.

В армянской лингвистике в целом имплицитный смысл изучен слабо, и данная статья является попыткой в некоторой степени восполнить пробел в этой области.

Ключевые слова: *имплицитный смысл, преднамеренный имплицитный смысл, непреднамеренный имплицитный смысл, тенденция, этика, вежливость, косвенные речевые акты, фоновые знания, манёвр, имплицитное отношение*

MIRANUSH KESOYAN – *The Expression of Intentionally Implied Meaning in Modern Armenian.* – The implied meaning in linguistics has been examined from various perspectives, and according to different criteria, different types of implied meaning has been distinguished. In particular, according to the intention of the speaker or author, in the absence or presence of a certain intention, unintentionally and intentionally implied meanings are distinguished. In this article, intentionally implied meaning is examined, in particular the circumstances and tendencies that can lead to the intentional introduction of implied meaning in the speech. In the case of intentionally implied meaning, the choice of the language units is considered by the author/speaker; he/she chooses linguistic units to best convey what he/she has to say, according to the situation and his/her purpose, after thinking thoroughly. The speaker/author can disguise even the simplest thought with a special intention by passing it off as a intentionally implied meaning.

In Armenian linguistics, the implied meaning has been little studied in general, and this article is an attempt to some extent to fill in that gap in this field.

Key words: *implied meaning, intentionally implied meaning, unintentionally implied meaning, intention, ethics, courtesy, indirect acts of speech, background knowledge, maneuver, implied attitude*